



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզայանի, Երվանդ Վարոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեծլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի և Սիմոն Բաբայանի, քննության առնելով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 28.10.2013 թվականի թիվ 28/1-Ա որոշմամբ մինչև 01.03.2014 թվականը կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) **Արա Զոհրաբյան**, ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ,

2) **Հունան Տեր-Վարդանյան**, ի.գ.թ., փաստաբան,

3) **Արսեն Սարգսյան**, ի.գ.թ., փաստաբան,

4) **Մանե Կարապետյան**, ի.գ.թ., փաստաբան,

5) **Սեդրակ Ասատրյան**, փաստաբան,

6) **Ռուբեն Մելիքյան**, ի.գ.թ., ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,

7) **Գառնիկ Սաֆարյան**, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,

8) **Ելիզավետա Դանիելյան**, ՀՀ վճարել դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճարել դատարանի քրեական պալատի դատավոր:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված**

28 փետրվարի 2014 թ.

թիվ 6/1-Ա

**ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝**

1) **փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ.**

2) **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.**

3) **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.**

4) **Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:**

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու տարի ժամկետով..:**

Ելնելով վերոգրյալից,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվել է 01.03.2012թ.՝ երկու տարի ժամկետով, մինչև 01.03.2014 թվականը,

հաշվի առնելով Պալատի նախագահի ներկայացրած փաստաբան անդամների թեկնածությունները,

հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից և ՀՀ վճռաբեկ դատարանից ստացված գրությունները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետի պահանջներով, միաձայն՝

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

### **1. Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.**

- 1) **Արա Զոհրաբյան**, ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ,
- 2) **Հունան Տեր-Վարդանյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 3) **Արսեն Սարգսյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 4) **Մանե Կարապետյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 5) **Սեդրակ Ասատրյան**, փաստաբան,
- 6) **Արման Թաթոյան**, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
- 7) **Գառնիկ Սաֆարյան**, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,

8) **Ելիզավետա Դանիելյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

**2. Սահմանել, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ մինչև 2016 թվականի մարտի 1-ը:**

**3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի տնօրենին, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել Պալատի կայքէջում:**

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

28 փետրվարի 2014 թ.  
թիվ 6/1-Ա  
ք.Երևան